ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/206

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Մասնակից՝ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ» գնանշման հարցման ընթացակարգ, գրասենյակների մաքրման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14270-2021 գրությամբ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 30.08.2021թ. թիվ 3/27/57511-21 գրության հիման վրա, 06.09.2021թ.-ին «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.09.2021թ.-ին:

07.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/206 համարի ծածկագիրը:

14.09.2021թ.-ին և 17.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.09.2021թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 30.08.2021թ. թիվ 3/27/57511-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետի համաձայն՝ ըստ չափաբաժիններ 1.6.8.11-րդ-ների, Ձեզ է ուղարկվում «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԷՅ ԷՅ ՋԻ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ ի ներկայացրած փաստաթղթերը, արձանագրությունները և ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագիրը, 01.03.2021թ-ին ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագիրը,վավերապայմանների փոփոխման վերաբերյալ համաձայնագիրը կնքված 11.05.2021թ. և պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, տեղեկանք հիմանվորումները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14270-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 08.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրասենյակների մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 21 օր հետո 1 օրվա ընթացքում, մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը:

v. Պատվիրատուի և «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 01.03.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 27.08.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/1069 ծանուցման համաձայն՝ 08.12.2020 թվականին ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության ստորաբաժանումներում գրասենյակային մաքրման ծառայություններ իրականացնելու նպատակով ՀՀ ոստիկանության և «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պայմանագիր: Վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ծառայությունները մատուցել սույն թվականի հունվարի 8-ից: Սույն թվականի հուլիս ամսվա ընթացքում ծառայությունները ՃՈ ստորաբաժանումներում չեն կատարվել համապատասխան տեխնիկական բնութագրին: 01.08.2021 թվականի դրությամբ համաձայն ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված զեկուցագրերի թվով 4 ստորաբաժանումներում «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից մաքրման աշխատանքներ չեն իրականացվում, ուստի ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից մաքրման ծառայությունների անհամապատասխանությունների վերաբերյալ ՃՈ են ներկայացվել զեկուցագրեր, տեղեկանքներ և բացասական եզրակացություններ համապատասխան չափաբաժինների վերաբերյալ: Հարկ է նշել, որ նշված պայմանագիրը լուծվում է ամբողջությամբ, քանի որ սույն թվականի հունիսի 7-ին համապատասխան զեկուցագրով, բացասական եզրակացություններով և զեկուցագրերի հիմք ընդունելով արդեն իսկ լուծվել է վերը նշված պայմանագրի թվով 5 չափաբաժիններով ստանձնված պարտականությունների մի մասը:

Պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են պայմանագրի

էական պայմանները: Հետևաբար, 2.1.3 ա) և բ) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 1-ին, 6-րդ, 8-րդ, և 11-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով պայմանագրի 5-րդ ենթակետի 1,2,3 պարբերությունների պահանջները՝ ՀՀ ոստիկանությունը 2021 թվականի օգոստոսի 24-ից միակողմանի լուծում է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14270-2021 գրությամբ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից,

պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրասենյակների մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝

պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 08.12.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով

պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 21 օր հետո 1 օրվա ընթացքում, մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը, իսկ 01.03.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 27.08.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/1069 ծանուցման համաձայն՝ 08.12.2020 թվականին ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության ստորաբաժանումներում գրասենյակային մաքրման ծառայություններ իրականացնելու նպատակով ՀՀ ոստիկանության և «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պայմանագիր: Վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ծառայությունները մատուցել սույն թվականի հունվարի 8-ից: Սույն թվականի հուլիս ամսվա ընթացքում ծառայությունները ՃՈ ստորաբաժանումներում չեն կատարվել համապատասխան տեխնիկական բնութագրին: 01.08.2021 թվականի դրությամբ համաձայն ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված զեկուցագրերի թվով 4 ստորաբաժանումներում «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից մաքրման աշխատանքներ չեն իրականացվում, ուստի ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից մաքրման ծառայությունների անհամապատասխանությունների վերաբերյալ ՃՈ են ներկայացվել զեկուցագրեր, տեղեկանքներ և բացասական եզրակացություններ համապատասխան չափաբաժինների վերաբերյալ: Հարկ է նշել, որ նշված պայմանագիրը լուծվում է ամբողջությամբ, քանի որ սույն թվականի հունիսի 7-ին համապատասխան զեկուցագրով, բացասական եզրակացություններով և զեկուցագրերի հիմք ընդունելով արդեն իսկ լուծվել է վերը նշված պայմանագրի թվով 5 չափաբաժիններով ստանձնված պարտականությունների մի մասը:

Պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, 2.1.3 ա) և բ) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 1-ին, 6-րդ, 8-րդ, և 11-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով պայմանագրի 5-րդ ենթակետի 1, 2, 3 պարբերությունների պահանջները՝ ՀՀ ոստիկանությունը 2021 թվականի օգոստոսի 24-ից միակողմանի լուծում է

2020 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պայմանագիրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 24.08.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 27.08.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14270-2021 գրությամբ «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2021/206 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**